

Դ. Ք. ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Գիտությունը բնության, հասարակության և մտածողության մասին հայացքների մի սիստեմ է, որը մեզ տալիս է գիտելիքներ նրանց արտաքին հատկությունների և, որ ամենակարևորն է, ներքին էության, նրանց զարգացման օրինաչափությունների մասին: Գիտությունը մարդկանց հասարակական պրակտիկ գործունեության արդյունք է, նրա տեսական ընդհանրացումը: Իրեն հերթին գիտությունը նպաստում է հասարակության զարգացմանը: Արտադրության և գիտության սերտ միահյուսումը վերջինիս դարձնում է անմիջական արտադրողական ուժ, որի դերը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում անընդհատ աճում է:

Գիտությունն իր երկարամյա պատմության ընթացքում ապրել է զարգացում. նախկինում համապարփակ գիտությունը ճյուղավորվել է, առաջացել են բազմաթիվ նոր գիտություններ: Իսկ այս բոլորն էլ իր հերթին պահանջ է առաջացրել կատարելու գիտությունների դասակարգում:

Գիտությունների դասակարգման շատ փորձեր են եղել՝ սկսած Արիստոտելից, Բեկոնից, Սեն-Սիմոնից, Կոնտից ու Հեգելից մինչև գիտությունների իսկապես գիտական դասակարգումն ըստ շարժման ձևերի, որը ձեռնարկել է Էնգելսն իր «Բնության դիալեկտիկա» աշխատության մեջ:

Գիտությունների դասակարգման առաջնահերթ խնդիրն է իմացության տարբեր ճյուղերը որոշակի սիստեմի բերել՝ համապատասխան նրանց ներքին կապի: Գիտությունների դասակարգումը հանդիսանում է բնագիտության մեթոդոլոգիական պրոբլեմը: Նա ունի փիլիսոփայա-մեթոդոլոգիական նշանակություն:

Մինչմարքսյան ժամանակաշրջանում գիտությունների դասակարգումն ունեւոր մետաֆիզիկական բնույթ, երբ ինքը բնագիտությունը դեռևս գտնվում էր իր զարգացման մետաֆիզիկական էտապում:

Սկսած Մարքսից և, հատկապես, Էնգելսից, երբ բնագիտության ասպարեզում հրաժարվեցին մետաֆիզիկայից և անցան մատերիալիստական դիալեկտիկային, որպես մտածողության մեթոդի, գիտությունների դասակարգումը լուծվում էր դիալեկտիկական սկզբունքներից ելնելով:

Գիտությունների դասակարգման հետ սերտորեն կապված է նաև փիլիսոփայության և մյուս մասնավոր, հատուկ գիտությունների փոխհարաբերության հարցը:

Գիտությունների դասակարգման պրոբլեմը մինչև XIX դարի կեսերը մնում էր չլուծված, որովհետև այն ժամանակ այդ հարցին սխալ մեթոդոլոգիական հիմքերից էին մոտենում (սխալ էր դրսևորվում փիլիսոփայության և մյուս մասնավոր գիտությունների կապը, և բնագիտության զարգացումը

դեռևս թույլ չէր տալիս գիտնականներին բացահայտելու բոլոր գիտությունների միջև եղած ներքին կապը)։

Մինչմարքսյան դասակարգումներում գիտությունների միջև դրվում էին կտրուկ սահմաններ, քանի որ նրանց հիմքում ընկած էին սուբյեկտիվության և գիտությունների կոորդինացիայի սկզբունքները։ Ըստ այդ դասակարգումների, բաժանման անդամները փոխադարձաբար ժխտում էին մեկը մյուսին, քանի որ բացառվում էր նրանց միջև որևէ տեսակի անցում։

Առանձին գիտությունների երևան գալը նշանակում էր նախկինում ամբողջական գիտության դիֆերենցիացիա և նրա մասնատումն առանձին գիտությունների։ Եւ այց դիտելով միայն գիտությունների դիֆերենցիացիան, մի կողմ թողնելով նրանց ինտեգրացիան, դրանով դասակարգումը ստացվում էր միակողմանի և արհեստական՝ առարկաները և երևույթները (և դրանք ուսումնասիրող գիտությունները) մտովի բաժանվում էին իրարից, մինչդեռ դրանք իրականում սերտորեն կապված են միմյանց հետ։

Գիտության դասակարգման համար անհրաժեշտ է գիտական ճիշտ մեթոդոլոգիա, որն անկարելի է առանց փիլիսոփայության և մասնավոր գիտությունների կապի։ Այդ կապը դրսևորվում է նրանում, որ փիլիսոփայությունը մասնավոր գիտություններին զինում է հետազոտման ընդհանուր մեթոդով, իսկ մասնավոր գիտություններն էլ իրենց հերթին կոնկրետ նյութ են տալիս փիլիսոփայությանը, որն անհրաժեշտ է մեթոդի և թեորիայի հետագա մշակման համար։

Փիլիսոփայության և մյուս գիտությունների փոխհարաբերությանը նման մոտեցում ցուցաբերելիս ինչպես գիտությունների մի մասը չի ենթարկվում մյուսին (օրինակ՝ բնափիլիսոփաների մոտ), այնպես էլ նրանք կտրված չեն մեկը մյուսից (ինչպես պոզիտիվիստների մոտ էր)։

Որպեսզի գիտությունների դասակարգումը լինի բնական, վերը հիշատակված սուբյեկտիվության և գիտությունների կոորդինացիայի սկզբունքների փոխարեն գիտությունների դասակարգման հիմքում անհրաժեշտ է դնել օբյեկտիվության և զարգացման սկզբունքները։

Քանի որ արտաքին աշխարհի իրերը, առարկաները, շարժման տարբեր ձևերը սերտորեն և որոշակի հաջորդականությամբ կապված են միմյանց հետ, ուստի դրանք ուսումնասիրող գիտությունները ևս պետք է կապված լինեն և դասավորվեն հաջորդաբար։

Զարգացման սկզբունքը դրսևորվում է նրանում, որ ինչպես շարժման ձևերն ուսումնասիրելիս ցածրագույնից գնում ենք դեպի բարձրագույնը, պարզից բարդը, ճիշտ նույնպես էլ գիտությունները դասակարգելիս պետք է սկսել շարժման պարզ ձևն ուսումնասիրող գիտությունից և գնալ շարժման ավելի բարդ ձևն ուսումնասիրող գիտությունը։

Գիտությունների դասակարգման՝ օբյեկտիվության և զարգացման սկզբունքները կրում են մատերիալիստա-դիալեկտիկական բնույթ։

Մատերիալիստական են, որովհետև հանդիսանում են արտացոլման թեորիայի ընդհանուր դրույթների կոնկրետացումը։ Քանի որ մասնավոր գիտությունները ներկայացնում են մատերիայի շարժման տարբեր ձևերի արտացոլումը, հետևաբար գիտությունների դասակարգումը միաժամանակ հանդիսանում է նաև շարժման տարբեր ձևերի դասակարգում։

Դիալեկտիկական են, որովհետև տարբեր գիտությունները չեն դասավոր-

վում արտաքինապես մեկը մյուսի կողքին, այլ անհրաժեշտաբար բխում են մեկը մյուսից, հաջորդում մեկը մյուսին, ինչպես շարժման մի ձևը զարգանում և անցնում է մյուսին:

Նթե օբյեկտիվության սկզբունքը գիտությունների դասակարգման հարցում արտահայտում է մատերիալիստական տեսակետ, ապա նույն հարցում սուբյեկտիվության սկզբունքն արտահայտում է իդեալիստական տեսակետ: Ճիշտ այդպես, մեթոդոլոգիական տեսակետից, զարգացման սկզբունքը համընկնում է այդ հարցի դիալեկտիկական մոտեցմանը, իսկ կոորդինացիայի սկզբունքը՝ մետաֆիզիկական մոտեցմանը:

Վերը բերված երկու սկզբունքները (օբյեկտիվության և զարգացման), որոնք իրենցից ներկայացնում են գիտությունների դասակարգման ընդհանուր դիալեկտիկա-մատերիալիստական սկզբունքներ, առաջին անգամ ձևակերպվել են էնգելսի կողմից XIX դարի 70-ական թվականներին: «Գիտությունների դասակարգումը, — նշում է էնգելսը, — որոնցից յուրաքանչյուրը վերլուծում է շարժման մի առանձին ձևը կամ շարժման մի շարք միմյանց հետ կապված և մեկը մյուսին փոխարկվող ձևերը, միևնույն ժամանակ հենց այդ ձևերի դասակարգումը, դասավորումն է նրանց ներհատուկ հաջորդականությամբ, և հենց դրանում էլ կայանում է նրա նշանակությունը: Անցումները պետք է կատարվեն ինքնին, պետք է բնական լինեն: Ինչպես որ շարժման մի ձևը զարգանում է մյուսից, այնպես էլ այդ ձևերի արտացոլումները, տարրեր գիտությունները պետք է անհրաժեշտաբար բխեն մեկը մյուսից»¹:

էնգելսը ելնելով իր առաջ քաշած զարգացման սկզբունքից, դեռևս XIX դարի 70-ական թվականներին ենթադրում էր անցումնային գիտությունների առկայությունը հիմնական գիտությունների միջև և նույնիսկ կանխագուշակեց դրանցից մի քանիսը: Նա բնական գիտությունների ընդհանուր շարքը պատկերացնում էր այնպես, որ թույլատրվում էր անցումներ հիմնական գիտությունների միջև. մեխանիկա... ֆիզիկա... քիմիա... բիոլոգիա:

Կարևոր է այն հանգամանքը, որ այդ անցումնային բնագավառները չի կարելի ամբողջությամբ մտցնել երկու կից գիտություններից մեկի մեջ, այլ անհրաժեշտ է դրանք վերագրել միաժամանակ թե մեկ, թե մյուս գիտությանը (օրինակ, գեոքիմիան, որն ամբողջությամբ վերցրած չի մտնում ոչ երկրաբանության, ոչ էլ քիմիայի մեջ, հանդիսանում է տիպիկ անցումնային գիտություն երկրաբանության և քիմիայի միջև):

Անցումնային գիտությունները, համաձայն հիմնական գիտությունների նկատմամբ իրենց միահյուսող բնույթի, ժամանակակից բնագիտության զարգացման գործում կատարում են ցեմենտացնող դեր. նրանք միահյուսում են տեսչատ-անջատ գիտությունները և դրանով ողջ բնագիտությանը տալիս ինտեգրալ, ամբողջական բնույթ: Հետևաբար, ներկայումս գիտությունների դիֆերենցիացիան ոչ միայն խորացնում է տարրեր գիտությունների անջատվածությունը, ինչպես այդ տեղի ունեւ նախկինում, այլ, ընդհակառակը, վերացնում է նրանց միջև եղած անջրպետը, ինքնըստինքյան նպաստելով նրանց ինտեգրացիային:

Հետևաբար, բնագիտության համար մեծ նշանակություն ունեցավ բազմաթիվ անցման (միջանկյալ) գիտությունների առաջացումը և հիմնական գիտությունների անցումը՝ մեկը-մյուսին դարձնելով սահուն, դրանով իսկ նախկին-

1 Յ. է. Ե. Ե. Ե., Բնության դիալեկտիկա, 1957, էջ 257:

նում գիտությունների դիֆերենցիացիայի կողքին սկսվեց տարբեր գիտությունների ինտեգրացիա:

Բնության մեջ շարժման տարբեր ձևերը սերտորեն կապված են միմյանց հետ, ուստի տարբեր գիտությունների ինտեգրացիան հենց իրենից ներկայացնում է այդ կապի արտահայտություններից մեկը:

Եթե XIX դարի սկզբի բնագիտությունն անջատ գիտությունների սիստեմ էր, ապա XX դարի բնագիտությունը միահյուսված, փոխադարձաբար ներթափանցող գիտությունների սիստեմ է:

XIX դարի վերջում և XX դարում բնագիտության մեջ կատարվել են մի շարք կարևոր հայտնագործումներ, որոնք ազդել են բնական գիտությունների դասակարգման վրա:

Սակայն ամենից կարևորն ատոմային ֆիզիկայի առաջացումն էր, որո հեղաշրջում կատարեց ինչպես բնագիտության մեջ (հատկապես, մի կողմից ֆիզիկայի և մյուս կողմից՝ մեխանիկայի ու քիմիայի փոխհարաբերության միջև), այնպես էլ փիլիսոփայության մեջ, որովհետև, ինչպես գրում է Լենինը, չքացավ «այն սահմանը, մինչև որը մատերիալ մեք գիտեինք մինչև այժմ, մեր գիտելությունն ավելի խորն է գնում. չքանում են մատերիայի այնպիսի հատկություններ, որոնք առաջ թվում էին բացարձակ, անփոփոխ, սկզբնական (անթափանցելիություն, իներցիա, զանգված և այլն) և, որոնք այժմ ևրևան են գալիս որպես հարաբերական հատկություններ, որ հատուկ են մատերիայի միայն մի քանի կացությունների»²:

Բացի գիտությունների ընդհանուր դասակարգումից (Բ. Մ. Կեդրով³) կան նաև առանձին կոնկրետ գիտությունների (ֆիզիկա, քիմիա և այլն) դասակարգումներ:

Այժմ դիտենք երկրաբանության տեղը գիտությունների ընդհանուր շարքում:

Երկրաբանությունն, որն ուսումնասիրում է երկրագնդի կառուցվածքը, նրա ծագումը և զարգացումը, երիտասարդ գիտություններից է (նա XIX դարի արդյունք է), որից հետագայում անջատվել են մի շարք փոխադարձ կապակցված գիտություններ, որոնք ուսումնասիրում են լեռնային ապարները և երկրբի կեղևն ընդհանրապես:

Անհրաժեշտ է նշել, որ այժմ «երկրաբանություն» տերմինի տակ հասկանում են երկրաբանական գիտությունների կոմպլեքս, որոնք փոխադարձաբար կապված են ինչպես միմյանց, այնպես էլ մյուս բնական գիտությունների հետ:

Երկրաբանական գիտությունների դասակարգման օրինակ գտնում ենք Լ. Բ. Ռուխինի⁴ մոտ, որը տվել է, մի կողմից, լիտոլոգիայի, մյուս կողմից՝ այլ երկրաբանական գիտությունների և երկրորդ՝ բնագիտական առարկաների փոխհարաբերությունը:

Այժմ տեսնենք, թե ինչպես կարելի է ելնելով գիտությունների դասակարգման դիալեկտիկա-մատերիալիստական սկզբունքներից և նկատի ունենալով մյուս բնական գիտությունների եղած դասակարգումներն ու երկրաբանու-

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, 1950, էջ 346:

³ Б. М. Кедров, Классификация наук, Изд. ВПШ и АОН, 1961.

⁴ Л. Б. Рухин, Основы литологии, Гостехиздат, 1953, стр. 7.

թյան զարգացման ներկա աստիճանը, կատարել երկրաբանական գիտությունների դասակարգման փորձ:

Ավելի մանրամասն դիտենք այն միջանկյալ գիտությունները, որոնք գոյություն ունեն, մի կողմից, երկրաբանության, իսկ մյուս կողմից՝ բնագիտության մյուս ճյուղերի, այն է՝ մեխանիկայի, աստղաբաշխության, ֆիզիկայի, քիմիայի և բիոլոգիայի միջև (տե՛ս աղյուսակը):

Ինչպես երևում է աղյուսակից, ավելի հոծ գծերով միացված են հիմնական բնական գիտությունները, որոնց դասավորությունը համապատասխանում է մատերիայի շարժման հիմնական ձևերին և որոնց միջև ընկած են այդ հիմնական գիտությունները կապող միջանկյալ գիտությունները:

Նախ դիտենք անցման գիտությունների առկայությունը, մի կողմից, քիմիայի և երկրաբանության միջև, մյուս կողմից՝ երկրաբանության և բիոլոգիայի միջև:

Բնության զարգացումը միշտ ուղիղ ղեկավարվում, այլ այն հաճախ կարծես երկատվում է, բեկոացվում և, ինչպես Բ. Մ. Կեդրովն⁵ է նշում, դրանով դրսևորում յուր հակասական, այսինքն դիալեկտիկական բնույթը:

Այսպես, ֆիմիական նյութի զարգացումը նյութավորվում է անօրգանական առաջացումների և բույր օրգանական, անօրգանականից միացությունների:

Առաջին ճյուղի ուսումնասիրությամբ զբաղվում են անօրգանական քիմիան, երկրաբանությունը և նրա ճյուղերը, իսկ երկրորդ ճյուղի ուսումնասիրությամբ օրգանական քիմիան և բիոլոգիան:

Քիմիայի և երկրաբանության սահմանային մասում, XX դարում առաջացել է նոր միջանկյալ գիտություն՝ գեոքիմիան (հիմնադիրը Վ. Ի. Վերնադսկին է, որին Վ. Ի. Լենինը անվանել է «բարձրատաղանդ մտածող-նատուրալիստ»⁶, գեոքիմիան զարգացրել են Վ. Մ. Գուլշմիտը և համակապես Ա. Ն. Ֆերսմանը), որն ուսումնասիրում է քիմիական էլեմենտների բաշխումն ու միգրացիան երկրակեղևում և որն ավելի մոտ է կանգնած երկրաբանությանը, քան թե քիմիային, դրա համար էլ մտցվում է երկրաբանության մեջ:

Քիմիայի և բիոլոգիայի միջև XIX դարի վերջում և XX դարի սկզբներին առաջացել է բիոքիմիան:


Երկրաբանության և բիոլոգիայի սահմանային մասում գեոևս XIX դարի սկզբներին առաջացել էր պալեոնտոլոգիան, որը օրգանիզմների բրածո մնացորդների և կենսադործունեության հետքերի միջոցով ուսումնասիրում է անցյալ երկրաբանական էպոխաների բուսական և կենդանական աշխարհների զարգացման պատմությունն և ավելի մոտ է երկրաբանությանը, իսկ XIX դարի վերջում ստեղծվեց հոլագիտությունը (այս ասպարեզում հատկապես մեծ են Դոկուլանի ծառայությունները), որը գիտություն է հողերի առաջացման, հատկությունների և աշխարհագրական տարածման մասին և ավելի մոտ է բիոլոգիային:

Համեմատաբար նոր գիտություն է բիոքիմիան (Վ. Ի. Վերնադսկի, Ա. Պ. Վինոգրադով), որը կապում է երկու միջանկյալ գիտություններ՝ գեոքիմիան և բիոքիմիան:

Երկրաբանության և մեխանիկայի սահմանային մասում, մի կողմից առաջացել է ինժեներական երկրաբանությունը, որն ավելի մոտ է երկրաբանու-

⁵ Б. М. Кедров. О классификации наук. Вопросы философии, 1955, № 2, стр. 64.
⁶ Վ. Ի. Լենին, Մատերիալիզմ և էպիրիսկրիտիցիզմ, 1948, էջ 412:

ԵՐԿՐԱԲԱՆՈՒՐՅԱՆ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ԳԻՏՈՒՐՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՏ



թյանը (ՍՍՌՄ-ում՝ ակադեմիկոս Սավարենսկի) և ուսումնասիրում է երկրաբանական հարցերը՝ կախված ինժեներական կառուցվածքների, այն է երկաթուղիների, կառուցվածքների, կանալների, կամուրջների, հիդրոկայանների, դործարանային շենքերի և այլնի նախագծումից և կառուցումից, իսկ մյուս կողմից՝ գրունտների մեխանիկան, որն ուսումնասիրում է ընահողերի ֆիզիկո-մեխանիկական հատկությունները և ավելի մոտ է մեխանիկային:

Ֆիզիկայի և երկրաբանության սահմանային մասում առաջացել է միջանկյալ գիտություն՝ գեոֆիզիկան, որը գիտություն է ամբողջությամբ վերցրած երկրագնդի ֆիզիկական հատկությունների և նրա պինդ, հեղուկ և գազանման թաղանթներում կատարվող ֆիզիկական պրոցեսների մասին:

Վերջին ժամանակներում սովետական երկրաբանների և աստղաբաշխների շրջանում (Բ. Լ. Լիշկով) լայն տարածում է գտել այն տեսակետը, որ լեռնակազմական պրոցեսների պատճառները հիմնականում բացատրվում են «երկնային ֆակտորներով», այն է Արեգակի, Լուսնի ազդեցությամբ, Երկրագնդի սեփական առանցքի և Արեգակի շուրջը պտտվելու յուրահատկություններով: Երկրաբանությունում այս նոր ուղղությունը նրանք անվանել են «աստրոգեոլոգիա», որն ամենից երիտասարդ միջանկյալ երկրաբանական գիտությունն է և իր յուրահատուկ դերով միջանկյալ տեղ է բռնում աստղաբաշխության ու երկրաբանության միջև:

Այսպիսով, ինչպես երևում է վերը շարադրվածից, համապատասխան բնական գիտությունների ուսումնասիրման օբյեկտը հանդիսանում է մատերիալի շարժման առանձին ձևերը (մեխանիկական, քիմիական, բիոլոգիական): Յուրաքանչյուր առարկայի զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք ունեն երկու էական ելակետ՝ սկզբնական և վերջնական:

Սկզբնականը յուրահատուկ միավոր է, որից կազմվում է զարգացման վերջնական արդյունք հանդիսացող (տվյալ առարկայի սահմաններում) բարդ «մարմինը», որին հասնելը միաժամանակ նշանակում է տվյալ առարկայի բնագավառի սահմաններից դուրս գալ:

Անհրաժեշտ է նշել, որ մի գիտության ուսումնասիրման առարկան հանդիսացող զարգացած «մարմինը» գիտությունների ընդհանուր շարքում մեկ այլ գիտության համար հանդես է գալիս որպես յուրահատուկ միավոր, ելակետ: Որպես օրինակ վերցնենք բյուրեղագիտության, միներալոգիայի և պետրոգրաֆիայի փոխհարաբերությունը:

Բյուրեղը միաժամանակ ուսումնասիրման առարկա է բյուրեղագիտության և միներալոգիայի համար: Առաջինի կողմից այն դիտվում է որպես բարդ սիստեմ՝ կազմված ատոմներից և իոններից որպես միավորներ, որոնք դասավորված են որոշակի, պարբերաբար կրկնվող կարգով և առաջացնում են բյուրեղագիտական ցանց, իսկ բյուրեղը դիտվում է որպես զարգացման արդյունք: Միներալոգիայում բյուրեղները դիտվում են որպես միավորներ, որոնցից առաջանում են միներալները:

Ի միջի այլոց հետաքրքրական է նշել, որ միներալոգիան երկրաբանական պիտելիքների ամենահնագույն ճյուղերից է, և միներալների դասակարգման առաջին փորձերն արդեն մանք գտնում ենք Արիստոտելի մոտ:

Միներալոգիայում զարգացման արդյունք հանդիսացող միներալները պետրոգրաֆիայում դիտվում են որպես միավորներ, որոնցից կազմված են լեռնային ապարները, որոնք իրենցից ներկայացնում են հոծ կամ փուխր ագրեգատ-

ներ և առաջանում են երկրակեղևի ներսում կամ նրա մակերեսին՝ որոշակի երկրաբանական պրոցեսների հետևանքով:

Տալով երկրաբանական գիտությունների կապը մյուս բնական գիտությունների հետ, կարևոր է նշել, որ նրանցից մի քանիսը ստեղծված են սովետական շրջանում մեր հայրենական գիտնականների կողմից:

Այսպես, օրինակ, հատկապես Վ. Ի. Վերնադսկու անվան հետ են կապված այնպիսի երկրաբանական գիտությունների ստեղծումը, ինչպիսիք են գեոքիմիան, բիոքիմիան, ռադիոերկրաբանությունը: Ինչպես վերը նշված է, Բ. Լ. Լիշկովի և ուրիշների անվան հետ է կապված նորագույն երկրաբանական գիտություն հանդիսացող աստրոգեոլոգիայի ստեղծումը:

Խոսելով գիտությունների դասակարգման մասին պետք է նկատի ունենալ, որ այդ դասակարգումն ինքնանպատակ չէ, այլ ունի տեսական և պրակտիկ նշանակություն՝ կատարվում է բնագիտության տարբեր ճյուղերի միահյուսում, ավելի ցայտուն է դրսևորվում շարժման տարբեր ձևերն ուսումնասիրող գիտությունների ներթափանցումները, փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը, ճշգրտվում է ներկա գիտությունների վիճակը և տեղը բնական գիտությունների ընդհանուր շարքում, հնարավոր է, որ հետագայում այլ երկրաբանական գիտություններ նոր լույս սփռեն երկրաբանական գիտությունների դասակարգման հարցի վրա:

Մյուս կողմից, տարբեր գիտությունների միահյուսումը այդ գիտությունների հետ հարստացնում է հետազոտական մեթոդները, որը հնարավորություն է տալիս ավելի խորը ճանաչել մատերիայի դրսևորումները հանդիսացող տարբեր առարկաները և երևույթները:

Այստեղից պարզվում է, թե ինչու բացի գիտությունների ընդհանուր դասակարգումից անհրաժեշտ է տալ նաև գիտությունների կոնկրետ դասակարգումը:

Ավարտելով մեզ հետաքրքրող հարցի շարադրումը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ մյուս բնական գիտությունների հետ երկրաբանության կապն արտահայտող վերը բերված սխեման իրենից ներկայացնում է երկրաբանության և մյուս բնական գիտությունների միջև եղած կապի արտահայտման փորձերից մեկը:

Д. Б. САРКИСЯН

ОПЫТ КЛАССИФИКАЦИИ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

Р е з ю м е

Исходя из марксистских принципов классификации наук и принимая во внимание имеющиеся классификации других естественных наук, автором была сделана попытка дать связь геологии с другими естественными науками. Графически эти связи представлены на прилагаемой схеме, которую, разумеется, нельзя считать окончательной и необходимо рассматривать как попытку классифицировать геологические науки.

В статье рассматриваются переходные науки, существующие между геологией и другими отраслями естествознания, т. е. механикой, астрономией, физикой, химией и биологией.

В сжатом виде нами даны предметы изучения отдельных переходных наук (геохимии, геофизики, палеонтологии, почвоведения, инженерной геологии, механики грунтов и астрогеологии).

Говоря о связи геологических наук с другими естественными науками важно отметить, что некоторые из них созданы в советский период нашими отечественными учеными. Так, например, с именем В. И. Вернадского связано создание таких геологических наук, какими являются геохимия, биогеохимия, радиогеология.

С именем Б. Л. Личкова и других связано создание новейшей геологической науки — астрогеологии.

Говоря о классификации наук необходимо иметь в виду, что эта классификация не является самоцелью, а имеет теоретическое и практическое значение — происходит сплетение разных отраслей естествознания, более ясно выражается взаимопроникновение, взаимообусловленность наук, изучающих различные формы движения материи, уточняется состояние и место в настоящее время существующих наук в общем ряду естественных наук.

Ясно, что в дальнейшем возможно возникнут новые геологические науки, которые по новому осветят вопрос классификации геологических наук. С другой стороны сплетение разных наук обогащает эти науки методами исследований, которые дают возможность более глубоко познавать разные предметы и явления, являющиеся проявлениями материи.

Отсюда становится ясным, что кроме общей классификации наук, необходимо дать также классификацию частных наук.